ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝
«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Շուշան Դոյդոյան
ՀՎՀՀ՝ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010-56-03-60, e-mail: foi@foi.am

Ներկայացուցիչ՝
Կարեն Մեժլումյան
Փաստաբանի արտոնագիր՝ 110
Հասցե՝ Երևան, Մաշտոցի 33/1, 12 տարածք
Հեռախոս՝ 50-18-08, 077-073-073
e-mail: karen-mezhlumyan@mail.ru

Պատասխանողներ՝
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ՝ Հենրիկ Նավասարդյան
Հասցե՝ Հասցե՝ Երևան, Արգիշտի փող. 1

Երևանի քաղաքապետարան
Հասցե՝ Հասցե՝ Երևան, Արգիշտի փող. 1

«Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
տնօրեն՝ Վազգեն Հարությունյան
Հասցե՝ Երևան, Ադոնց 2

«Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
Հասցե՝ Երևան, Ադոնց 2

13.08.2013թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ

Իրավունքի խախտման փաստը ճանաչելու, վարչական պատասխանատվության ենթարկելու և տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջների մասին

1. Փաստերը որոնց վրա հիմնված է հայցապահանջը.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Հայցվոր) հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածներին, 19.07.2013թ-ին թիվ 204-ի 2 և 204-ի 3 հարցումներով Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին ու ՀՀ ոստիկանության ՃՈ պետ Արսեն Գալստյանին խնդրել է տրամադրել Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն և այլն) պատճենը:

Ոստիկանության ՃՈԾ պետից 24.07.2013թ. թվագրմամբ պատասխան է ստացվել այն մասին, որ տեղեկատվություն ստանալու հարցումը անհրաժեշտ է ուղարկել Երևանի քաղաքապետարան, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետից 26.07.2013թ. թվագրմամբ պատասխան է ստացվել այն մասին, որ. «Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել այդ աշխատանքներն իրականացնող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությանը»:

Վերը նշված փաստերը հաստատվում են հարցումներով և պատասխաններով:

Ստանալով Երևանի քաղաքապետարանի պատասխանը, Հայցվորը կրկին հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներին, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածներին, 26.07.2013թ. թիվ 204-ի 4 հարցմամբ դիմել է «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ (այսուհետ՝ ՓԲԸ) տնօրեն Վազգեն Հարությունյանին, խնդրելով տրամադրել Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն և այլն) պատճենը:

Նաև պարզաբանվել է, որ ՓԲԸ-ն Օրենքի համաձայն հանդիսանում է տեղեկատվության տնօրինող:

Ստացվել է ՓԲԸ-ի տնօրեն Վազգեն Հարությունյանի 01.08.2013թ. պատասխանն այն մասին, որ ՓԲԸ-ն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համափայն հանրային նշանակության կազմակերպություն չէ, քանի որ Ընկերությունը հանրությանը ծառայություններ չի մատուցում և ապրանքային շուկայում մենաշնորհ կամ հերիշխող դիրք չունի, հետևաբար Օրենքը ՓԲԸ-ի վրա չի տարածվում և ՓԲԸ-ն պարտավորություն չունի տրամադրելու տեղեկատվություն:

Նշված փաստերը հաստատվում են ԻԱԿ-ի հարցմամբ և ՓԲԸ-ի պատասխանով:

2. Հայցապահանջի իրավական հիմնավորումը

ՀՀ Սահմանադրության՝

- 27 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝

անկախ պետական սահմաններից».

- 27.1 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքներն առարկայանում են նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որի՝

- 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «*Սույն օրենքի գործողությունը տարածվում է ... բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա*»,

- 3 հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինող են՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ... բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք, իսկ հանրային նշանակության կազմակերպություն են՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև ... տրանսպորտի ... ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները:

- 6 հոդվածի 1-ին մասի համաձայն. «*Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը*»:

- 9 հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ հայցվող տեղեկատվությունը պետք է տրամադրվեր 5-օրյա ժամկետում, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝

- 2-րդ հոդվածի համաձայն. «*Ավտոկայանատեղի համար գանձվող տուրքը ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանատեղում կայանելու համար սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից հաստատված չափով և սույն օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է*»:

- 3-րդ հոդվածի համաձայն. «1. Ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպում է համայնքի ղեկավարը կամ համայնքային ենթակայության կազմակերպությունը:

2. Համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք իրականացնում են տուրքի գանձումը՝ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրին համապատասխան»:

- 15-րդ հոդվածի համաձայն. «*1. Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:*

2. Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողությունը կարող է իրականացվել անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի միջոցով (նկարահանող, ձայնաագդանշանային համակարգեր և այլն):

3. Ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը որոշում է տվյալ համայնքի ավագանին»:

Վերը նշվածի իրավանորմերից հետևում է, որ պատասխանողները տեղեկատվություն տնօրինող են, նկարահանող սարքերի միջոցով տուրքի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը, ինչը նշանակում է, որ ինչպես համայնքի ղեկավարը, այնպես էլ նրա կողմից լիազորված անձը, տվյալ դեպքում մյուս պատասխանողը և տեղեկատվություն տնօրինող են և ունեն այդ տեղեկատվությունը, սակայն ի խախտումն Սահմանադրությամբ և Օրենքի վերը նշված դրույթների, հրաժարվել են տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Բացի այդ, պատասխանող «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանը իր մամուլի ասուլիսում հրապարակային հայտարարեց, որ Երևան համայնքի բյուջե մուծվող վճարովի ավտոկոյանատեղի տեղական տուրքի 70 տոկոսը վերադարձվում է Ընկերությանը, այսինքն նշված ընկերությունը ֆինանսավորվում է Երևան համայնքի բյուջեի հաշվին, ինչը նույնպես վկայում է այն մասին, որ նշված պատասխանողը ևս տեղեկատվություն տնօրինող է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝

- 187.7 հոդվածի համաձայն. «Օրենքով նախատեսված տեղեկությունը … հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով»:
- 223 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները քննում են՝ սույն օրենսգրքի 189^7 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով,
- 254 հոդվածի վերջին պարբերության համաձայն. «Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի … 189^7 հոդվածներով … նախատեսված դեպքերում»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26 գլխում ներառված՝ 151 հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով»:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով, 11-րդ Գլխի, այդ թվում 68-րդ, 71-րդ հոդվածների, 26-րդ Գլխի պահանջներով՝

Խնդրում եմ՝

Ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն

ստանալու իրավունքի խախտման փաստը:

Պահանջվող տեղեկատվության տրամադրումը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ՝ Հենրիկ Նավասարդյանի և «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ տնօրեն՝ Վազգեն Հարությունյանի կողմից մերժելու համար վերջիններիս ենթարկել վարչական պատասխանատվության, յուրաքանչյուրին 50.000 դրամի չափով:

Պարտավորեցնել պատասխանողներին, տրամադրել Երևան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն և այլն) պատճենը:

Միաժամանակ խնդրում եմ պատասխանողից բռնագանձել դատական ծախսերի գումարը:

Կից ներկայացվում են՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիր.
2. Հարցումները,
3. Պատասխանները,
4. Հայցադիմումը պատասխանողների կողմից ստանալու մասին ապացույցներ,
5. Լիազորագիր,
6. Արտոնագրի պատճեն:

«Ինֆորմացիայի ազատության
կենտրոն» ՀԿ նախագահ՝ Շուշան Դոյդոյան